ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«05» 08 2024 թ.
№ ԳԱՊՁԲ-24/2-1246

«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00522502)
տնօրեն Հ. Գասպարյանին
հասցե՝ ՀՀ ք. Երևան, Երկաթուղային 4 փ. 2/6
էլ. հասցե՝ HaykLV@yandex.ru
հեռ. 097 90 01 15

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի միջև 25.12.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-3/1-5 գնման պայմանագրի և դրա հիման վրա 30.04.2024թ. կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն 2024թ. 2-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.05.2024թ., ի թիվս այլ ապրանքների պետք է մատակարարեր Պայմանագրի 5-րդ չափաբաժնով նախատեսված, ընդհանուր՝ 625 հատ Ռադիոընդունիչներ (Ռադիոընդունիչ): Սակայն, 22.07.2024թ. դրությամբ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ ապրանքները չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. օգոստոսի 5-ին, միակողմանի՝ 5-րդ չափաբաժնի մասով, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է **486 875** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է **730 313** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **86 364** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 22.07.2024թ. ներառյալ և **23 990** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ընդ որում, Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները մինչև 15.08.2024թ. ներառյալ, Ձեր կողմից վճարվելու դեպքում՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 15.08.2024թ. ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի կողմից տույժի, տուգանքի, պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միջոցներ կձեռնարկվեն «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի կողմից վճարման ենթակա՝ տույժի, տուգանքի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ